«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:**info@armforest.am**
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

№ 31-10/96
«24» «03» 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարության
գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող պարոն Ա. Եսայանին

Պատճենը՝ «Էլմիրա Աղամյան » ԱՁ-ին
Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան 1փ/52 տ.

Հարգելի գործընկերներ

Ձեզ եմ տրամադրում ՈՀԱ-ԳՀԾՁԲ-2025/7 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Էլմիրա Աղամյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու մասին որոշումը:

Հարգանքով՝ Սևակ Մարկոսյան

Գնումների բաժնի պետ
Մանե Խաչատրյան
094-64-20-33

ՈՐՈՇՈՒՄ
ՈՀԱ-ԳՀԾՁԲ-2025/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԷԼՄԻՐԱ ԱՂԱՄՅԱՆ» Ա/Ձ -ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայանտառ» ՊՈԱԿ -ի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով փայտի չորացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՈՀԱ-ԳՀԾՁԲ-2025/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից, այդ թվում՝ «Էլմիրա Աղամյան» Ա/Ձ -ն (հայտը կցվում է):

2025 թվականի փետրվարի 24-ի N2 արձանագրությամբ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Էլմիրա Աղամյան» Ա/Ձ -ն (արձանագրության պատճենը կցվում է):
«Էլմիրա Աղամյան» Ա/Ձ -ն պատշաճ ծանուցվել է հաղթող մասնակից ճանաչվելու մասին և 10.03.2025թ. ներկայացվել է պայմանագրի կնքման առաջարկ՝ էլեկտրոնային փոստով ուղարկվել է պայմանագրի նախագիծը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում (հինգ աշխատանքային օր) չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Էլմիրա Աղամյան» Ա/Ձ -ն սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլմիրա Աղամյան» Ա/Ձ -ն խախտել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ստորև ներկայացվում են անհրաժեշտ տեղեկությունները՝ համաձայն ձևաչափի.

Մասնակցի				
Անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
Էլմիրա Աղամյան Ա/Ձ	71104461	Նոյեմբերյան Տավուշի մարզ 1փ/52 տ	խախտել է Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները , որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	24.03.2025թ. ՀԱ-ԳՀԾՁԲ-2025/7

Սույն որոշման բնօրինակը ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, պատճենը՝ «Էլմիրա Աղամյան» Ա/Ձ -ին:

Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Սևակ Մարկոսյան